ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(ակադեմիկոս Համլետ Գևորգյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)



Լրացավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Համլետ Ամբակումի Գևորգյանի 90 տարին:

Համլետ Գևորգյանը (Տեր-Գևորգյան) ծնվել է Երևանում 1927 թ. հուլիսի 10-ին, սովորել է Թիֆլիսի հայկական դպրոցներում, 1944-ին ավարտել է Երևանի Մռավյանի անվան ռուսական դպրոցը, 1944-45-ին սովորել է Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանում, ապա ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, որն ավարտել է 1950 թ.: 1955 թ. ավարտել է Հայաստանի ԳԱ փիլիսոփայության սեկտորի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Աբստրակցիայի դերը իմացության մեջ» թեմայով: 1970 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝«Հավանական և հավաստի գիտելիք» թեմայով, որն ամփոփում էր համանուն գրքի և դրան հարող տասնյակ հրապարակումների դրույթները: 1972 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 1996 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2013 թ. նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետու-թյան գիտության վաստակավոր գործչի կոչում:

Հ. Գևորգյանը 1956-ից ցայսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում. եղել է ԳԱ փիլիսոփայության սեկտորի իմացաբանության թեմատիկ խմբի ղեկավար, ինստիտուտի դիալեկտիկական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայական հարցերի բաժնի վարիչ, գիտության փիլիսոփայության, ժամանակակից փիլիսոփայության, պատմության փիլիսոփայության գիտահետազոտական խմբերի ղեկավար: Պատրաստել է փիլիսոփայական գիտությունների 15 թեկնածու և դոկտոր: 1992-1996 թթ. վարել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնը: 1965-1980 թթ. ԵՊՀ-ում դասավանդել է փիլիսոփայություն, նորագույն և ժամանակակից փիլիսոփայության պատմություն, իմացաբանություն, գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն, տրամաբանություն:

Հ. Գևորգյանի գրչին են պատկանում 13 մենագրություն՝ գրքեր և գրքույկներ, 180-ից ավելի հոդվածներ, կոլեկտիվ աշխատությունների բաժիններ, հանրագիտարանային բառահոդվածներ և այլն, որոնք վերաբերում են գիտության փիլիսոփայությանը, մեթոդաբանությանը և տրամաբանությանը, արևմտյան փիլիսոփայության պատմությանը և իմացաբանական ուսմունքների քննական վեր-

լուծությանը, պատմության ու մշակույթի փիլիսոփայությանը, հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերին:

Փիլիսոփայության մեջ իմացաբանական խնդրակարգը հենց սկզբից եղավ Հ. Գևորգյանի գիտական հետաքրքրությունների առանցքը, և հիմա էլ այն հանգուցային է համարվում փիլիսոփայության և դրա պատմության համար: Մասնավորապես իմացաբանական հարցադրումներն ու լուծումներն այն բանալին են, որը հնարավորություն է տալիս «բացելու» և ըմբռնելու նոր ժամանակի գիտության և փիլիսոփայության դասականների ուսմունքներն ու գիտական մտքի զարգացման ընթացքը:

1960-ական թթ. Հ. Գևորգյանի աշխատություններով իմացաբանության ավանդական ընդհանուր խնդրակարգից անցում կատարվեց դեպի գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության և տրամաբանության բնագավառ, որը դարձավ նրա ղեկավարած բաժնի հետազոտությունների առարկան և համամիութենական ճանաչում բերեց գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության և տրամաբանության հայկական դպրոցին:

1969-1974 թթ. Մոսկվայի և Կիևի համապատասխան բնագավառների մասնագետների մասնակցությամբ լույս ընծայվեց երեք պրակ՝ «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» անվանումով: Իսկ Անդրկովկասի փիլիսոփաների և տրամաբանների մասնակցությամբ 1977 թ. լույս տեսավ «Փիլիսոփայությունը և գիտության մեթոդաբանական հարցերը» ժողովածուն: Հ. Գևորգյանի ծրագիրը ելնում էր այն փաստից, որ գիտական տեսությունը տրամաբանական ամբողջական համակարգի տեսքով ներկայացնելու լոգիստիկական իդեալին փոխարինելու եկած՝ «գիտության զարգացման, գիտական հայտնագործության, ապացուցումների և հերքումների տրամաբանության» տեսությունները նույնպես նպատակ ունեն տրամաբանական վերլուծության միջոցով և տրամաբանական կառուցվածքների մեջ գիտական գիտելիքը ներկայացնել ճանաչողության սուբյեկտից լիովին օտարված տեսքով: Հ. Գևորգյանը այս ծրագրի տեսական հիմնավորումը տվել է մի ամբողջ շարք հրապարակումներում («Դիտողություններ գիտական գիտելիքի տրամաբանական-իմացաբանական վերլուծության մասին», «Գիտական գիտելիքի օբյեկտիվության տեսանկյունները», «Գիտական տեսության ձևականացման պրոբլեմը», «Ճշգրիտ փիլիսոփայության ժամանակակից մի քանի տարատեսակությունների մասին» և այլն) և «Հավանական և հավաստի գիտելիք» (1965, ռուսերեն), «Գիտելիքի ժամանակակից տեսության ակնարկ» (1978) գրքերում:

Գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության խնդրակարգի իմաստավորումը տրվել է Հ. Գևորգյանի «Գիտության պատմական մեթոդաբանության ակնարկ» (1987, ռուսերեն) գրքում և պատմական վերակազմությանը վերաբերող մի շարք հրապարակումներում: Բացահայտվել են այն տեսանկյունները, որոնցով գիտությունը ներկայանում է որպես պատմական երևույթ և մշակույթի երևույթ, հատկապես քննվել է գիտության պատմամշակութային մեկնաբանությունների հետ գիտական գիտելիքի օբյեկտիվության և գիտական ռացիոնալության համատեղելիության հարցը:

«Հավանական և հավաստի գիտելիք», «Գիտելիքի ժամանակակից տեսության ակնարկ», «Գիտության պատմական մեթոդաբանության ակնարկ», «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» գրքերում Հ. Գևորգյանը դիտարկել է փիլիսոփայական-իմացաբանական բնույթի բարդ հարցեր, որոնք քննվել են դեռևս գիտության և փիլիսոփայության դասականների կողմից: Սակայն քննության առարկա դարձած այդ հարցերից շատերը, որոնք, թվում էր, թե արդեն լուծված են, վերստին արծարծվում են՝ ծնունդ տալով նորանոր գաղափարների:

Հ. Գևորգյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում են եղել նաև հայոց պատմությանը և հայ մշակույթին վերաբերող հարցերը: Նրա «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» (1992, ռուսերեն), «Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ» (1997), «Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ» (2005) գրքերում ու պատմական վերակազմության մեթոդին վերաբերող մի շարք հոդվածներում տրվել են պատմափիլիսոփայության և մշակույթի փիլիսոփայության հիմնահարցերի նորովի մեկնաբանություններ: Այս հարցերում նա ելնում է այն կանխադրույթից, որ հայոց պատմությունը և հայկական մշակույթի պատմությունը պետք է ներկայացվեն ժամանակակից արևմտյան պատմագիտական, պատմափիլիսոփայական և մշակութաբանական տեսությունների համատեքստում:

Հ. Գևորգյանի «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» գրքում առաջին անգամ ներդրվել են «մշակույթի սինխրոնիկ և դիախրոնիկ ամբողջականություն» և «ազգային մշակույթի պատմական շարունակականություն» գաղափարները, տրվել է ազգային մշակույթի սահմանումը, բացահայտվել էթնիկ մշակույթի և ազգային մշակույթի հետ դրա հարաբերությունը, հստակեցվել են մշակույթի ժառանգորդման խնդրի լուծման համար պատմական վերակազմության մեթոդի հնարավորություններն ու կիրառության պայմանները և այլն:

Հ. Գևորգյանը միշտ կարևորել է հայ փիլիսոփայության պատմությունը փիլիսոփայության ընդհանուր պատմության համատեքստում քննության առնելու արդիական խնդիրը, որի վերաբերյալ հետաքրքիր դիտարկումներ են պարունակում նրա «Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները» ծավալուն հոդվածը, «Ժամանակակից արևմտյան փիլիսոփայությունը և նրա հնարավոր ազդեցությունը հայ փիլիսոփայության վրա» ակնարկը և ուրիշ հրապարակումներ: Տարբեր առիթներով նա բազմիցս անդրադարձել է մասնավորապես Դավիթ Անհաղթի և հայ փիլիսոփայության մեջ նրանով սկզբնավորված ավանդույթին: Ըստ Հ. Գևորգյանի՝ քաղաքակրթությունների հաջորդափոխության ժամանակաշրջանում՝ մ.թ. առաջին հազարամյակին, չափազանց կարևորվում են հայ մշակույթում և հատկապես փիլիսոփայությունում հունահելլենիստական և վաղքրիստոնեական ավանդույթների պահպանումն ու փոխանցումը եվրոպական քաղաքակրթությանը:

Ակադեմիկոս Հ. Գևորգյանը ծավալել է նաև մանկավարժական և հասարակական արգասավոր գործունեություն: Իր տեսական գիտելիքները նա ի սպաս է

դրել մեր ազգային կյանքի համար արդիական շատ խնդիրների լուծմանը: Ամենից առաջ նա հրաշալի դասախոս է, ԵՊՀ-ում կարդացել է փիլիսոփայության և տրամաբանության ընդհանուր դասընթացներ, ԵՊՀ փիլիսոփայության ֆակուլտետում՝ հատուկ դասընթացներ՝ «Ժամանակակից իմացաբանական ուսմունքները», «Ժամանակակից տրամաբանական ուսմունքները», «Նորագույն և ժամանակակից փիլիսոփայության պատմություն»: Գրել է «Տրամաբանություն» դասագիրքը (համահեղինակ՝ Վ. Բաղդասարյան, 1994 և 2015), «Հասարակագիտության հիմունքներ դասընթացի հայեցակարգ և ծրագիր»: Նա եղել է Հայկական Սովետական Հանրագիտարանի փիլիսոփայության և իրավունքի գիտաճյուղային խմբագրության նախագահ, գիտախմբագրական խորհրդի անդամ: Հանրգիտարանի համար գրել է շուրջ հարյուր հոդված փիլիսոփայության և տրամաբանության վերաբերյալ: Եղել է հանրապետության Մինիստրների խորհրդին առընթեր Տերմինաբանական կոմիտեի, Հայերենի բարձրագույն խորհրդի, ՀՀ Սահմանադրությունը մշակած՝ Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովի անդամ:

Համլետ Գևորգյանն իր ողջ գիտական գործունեության մեջ որդեգրել է ճշմարտության չափանիշը: Վաստակաշատ փիլիսոփան մշտապես հավատարիմ է մնացել պատմական իրողությունների օբյեկտիվ գնահատման սկզբունքին, որը վկայում է նաև նրա քաղաքացիական ազնիվ կեցվածքի մասին:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ռ. Մ.
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒ. Մ.
Հայագիտության ու հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս

ՊՈՂՈՍՅԱՆ Գ. Ա.
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս